ՀՀ մշակույթի նախարարություն

# Մամուլի հաղորդագրություն

## «Մշակութային ժառանգության պահպանումը Հայաստանում» ծրագրի՝ Եվրոպա Նոստրա 2015 մրցանակի արժանանալու վերաբերյալ

**Հաագա, 2015 թ. ապրիլի 14**

**«Մշակութային ժառանգության պահպանումը Հայաստանում»** վերապատրաստման ծրագիրը արժանացել է Եվրոպա Նոստրա 2015 թ. մրցանակի: Հրապարակային հայտարարությունը արվել է այսօր, առաջատար եվրոպական ժառանգության կազմակերպության՝ Եվրոպա Նոստրայի կողմից: Եվրոպա Նոստրա մրցանակաբաշխությունը ներկայացնում է եվրոպական երկրների ակնառու նվաճումները, որոնք չեն մասնակցում ԵՄ-ի «Ստեղծագործ Եվրոպա» («Creative Europe») ծրագրին: Հայաստանի մրցանակակիր նախագիծը Եվրոպական Միության Մշակութային ժառանգություն մրցանակի արժանացած տարվա մյուս հաղթողների նախագծերի հետ կներկայացվի Եվրոպա Նոստրա մրցանակաբաշխության արարողությանը, որը տեղի կունենա հունիսի 11-ին Օսլոյի (Նորվեգիա) Քաղաքապետարանում: Հռչակավոր օպերային երգիչ և Եվրոպա Նոստրայի նախագահ **Պլասիդո Դոմինգոն** կլինի **Եվրոպայի ժառանգության մրցանակաբաշխության** արարողության համահաղորդավարը:

Հայաստանում պահպանվող մշակութային ժառանգության նախագիծը հանդիսանում է ՀՀ մշակույթի նախարարության, Իտալիայի Արտաքին գործերի նախարարության, Միլանի Պոլիտեխնիկի և Ճարտարապետության և Շինարարության Հայաստանի ազգային համալսարանի միջև համատեղ ձեռնարկը: Այն նպատակ ունի խթանել ժառանգության պահպանության, ինչպես նաև գիտելիքի և լավագույն միջազգային փորձի փոխանակումը:

Ծրագիրը իրականացվել է 2012-2014 թթ. ընթացքում: Ավելի քան 60 խորհրդատուներ և փորձագետներ միացել են նախագծին և նպաստել Հայաստանի, Պարսկաստանի կամ Սիրիայի՝ ոլորտի երիտասարդ մասնագետների վերապատրաստումներին: 56 ուսանողներ ազատ մասնակցության իրավունք են ստացել Միլանի Պոլիտեխնիկի և Ճարտարապետության և Շինարարության Հայաստանի ազգային համալսարանի (ՃՇՀԱՀ) կողմից իրականացվող 4 մագիստրոսական կուրսերից մեկին մասնակցելու համար: Մոտ 150 ուսանողներ, ճարտարապետներ, ինժեներներ, հնագետներ, վերակ վարպետներ, թանգարանային մասնագետներ և պետական պաշտոնյաներ մասնակցել են մասնագիտացված գործնական կուրսերին: Ծրագիրը նաև նպաստել է Քոբայրի վանական համալիրի որմնանկարների վերականգնման աշխատանքներին, ինչպես նաև Արուճի հնագիտական վայրի ու տաճարի հետազոտությանը, ներառյալ, պեղումները, վերականգնման նախագծերը և որմնանկարի պահպանությունը:

14 տարբեր երկրների փորձագետների մասնակցությունը այս նախագծի վերջնական համաժողովին ցույց տվեց միջազգային հանրության հետաքրքրվածությունը Հայաստանի ժառանգության նկատմամբ և մեծացրեց իրազեկվածության մակարդակը ներկա և ապագա սերունդների համար ժառանգության պահմանման կարևորության մասին: Վրաստանի, Թուրքիայի, Իրանի եւ Սիրիայի ներկայացուցիչների ներկայությունը ցույց տվեց, որ մշակույթը և ժառանգությունը կարող են հսկայական դեր ունենալ խաղաղության հաստատման գործում:

«Այն, ինչ մեծ տպավորություն է թողել Ժյուրիի վրա, երկու ժողովուրդների արդյունավետ գործընկերության արդյունք է, որոնք, հարեւաններ չլինելով, կիսում են իրենց անցյալի փիլիսոփայությունը: Միլանի Պոլիտեխնիկի հավատմամբ՝ մոտեցումը բացառապես գիտական և օբյեկտիվ է, և Հայաստանը չէր կարող առանց իտալական տեխնիկական նոր մոտեցումների: Պատասխանատվությունը ընդունելի է, իսկ օգուտները, զգալի, դիվիդենտներ բերելով նաև Հայաստանի սահմաններից դուրս, դեպի հայկական սփյուռք»,- հայտարարել է մրցանակաբաշխության Ժյուրին:

«Մշակութային ժառանգության պահպանումը, որը հայկական մշակութային ժառանգության հիմքերից մեկն է, ապահովում է քաղաքակրթության զարգացումը: Ես համոզված եմ, որ վարպետության դասընթացներին մասնակցող մասնագետների ունակությունները

հարստացել են ժամանակակից գիտելիքներով եւ նրանք ձեռք են բերել նոր հմտություններ, որոնք կարող են օգտագործել ազգային մշակութային ժառանգության ուսումնասիրության և պահպանման գործում:

Միևնույն ժամանակ, ես հույս ունեմ, որ հայ-իտալական համագործակցության արդյունավետ ավանդույթը մշակութային ժառանգության պահպանության բնագավառում շարունակական կլինեն»,- նշում է Հայաստանի մշակույթի նախարար տիկին Հասմիկ Պողոսյանը:

**Իտալական համագործակցությունը** (DGCS) մշակույթը համարում է տնտեսական և սոցիալական զարգացման շարժիչ ուժ: Ծրագիրը համատեղ իրականացվում է DGCS-ի և Միլանի Պոլիտեխնիկի կողմից, զգալի ներդրում է մշակութային ժառանգության գործում, նպաստում է հետագա սերունդների կյանքի որակի բարելավմանը, եւ տվյալ տարածքում խաղաղության հաստատմանը, որը զգալի խթաններ է ստեղծում տեղական ձեռնարկատիրական գործունեության համար:

Եվրոպական ժառանգության մրցանակաբաշխության արարողությունը Եվրոպա Նոստրայի Եվրոպական ժառանգության տարեկան համագումարի մասն է, որը տեղի կունենա Օսլոյում՝ 2015 թ. հունիսի 10-14-ը: Համագումարը աջակցություն է ստանում Եվրոպական Միության «Ստեղծագործ Եվրոպա» («Creative Europe») ծրագրից, նորվեգական «Ռիկսանտիկվարեն» մշակութային ժառանգության և արվեստների խորհրդի տնօրինությունից, Օսլո քաղաքից, ինչպես նաև Նորվեգիայի բազմաթիվ հասարակական և մասնավոր կառույցներից:

**Ընդհանուր տեղեկատվություն**

**Եվրոպա Նոստրան** մշակութային ժառանգության կազմակերպությունների եվրոպական դաշնություն է: Ընդգրկելով 42 երկիր՝ կազմակերպությունը քաղաքացիական հասարակության կոչն է՝ պահպանելու և խթանելու Եվրոպայի մշակութային և բնական ժառանգությունը: Եվրոպա Նոստրան Եվրոպական ներդրումային բանկ ինստիտուտի հետ համագործակցությամբ քարոզում է **«7 առավել վտանգված»** ծրագրի շրջանակներում եվրոպական վտանգված հուշարձանները, վայրերը և բնապատկերները պահպանելու գաղափարը:

Եվրոպա Նոստրա մրցանակաբաշխության միջոցով ընդգծվում է ԵՄ-ի Մշակութային ժառանգության մրցանակի կարևորությունը, ինչպես նաև ժառանգության պահպանության հետ կապված եվրոպական

ռազմավարությունն ու քաղաքականությունը: Հիմնադրվելով 1963 թ.՝ Եվրոպա Նոստրան համարվում է ամենաներկայացուցչական և ազդեցիկ ժառանգության ցանցը Եվրոպայում: 2014 թ. կազմակերպությունը արժանացել է ԵՄ «Ստեղծագործ Եվրոպա» («Creative Europe») ծրագրի դրամաշնորհին՝ Եվրոպայում «Ժառանգության ինտեգրման» ցանցային գործունեության աջակցելու համար:

2014 թ. Իտալիան նոր օրենք է ընդունել <u>Համագործակցության զարգացման</u> վերաբերյալ: Համաձայն վերոնշյալ օրենքի (n125/2014) 1-ին հոդվածի՝ համագործակցության զարգացումը իտալական արտաքին քաղաքականության անբաժանելի մասն է կազմում: Ծրագրի նպատակն է խթանել խաղաղությունը և արդարությունը, փոխադարձ հարաբերություններն ու համագործակցությունը: Օգնության և արդյունավետության զարգացման թեմայով միջազգային քննարկումներին հետևելուց հետո, Իտալիայի արտաքին գործերի և Միջազգային համագործակցության նախարարությունը պարտավորվում է նպաստել ուժերի կենտրոնացմանը հետևյալի շուրջ. զերակա ճյուղերի քանակի նվազում՝ մասնավորապես սննդամթերքի անվտանգության և սնուցման, մարդու իրավունքների պաշտպանության՝ հիմնականում կանանց ներուժի բացահայտման և կառավարման, [illegible] և կրթության հարցում: Շրջակա միջավայրը և կենսաբազմազանությունը, ինչպես նաև մշակութային ժառանգությունը, համարվում են հիմնախնդրի խաչաձև հարց, որը վերաբերում է յուրաքանչյուրին:

**ՀՀ մշակույթի նախարարությունը** իրականացնում է Հայաստանի Կառավարության քաղաքականությունը մշակույթի ոլորտում: Ինչ վերաբերում է օրենսդրությանը, դրա համապատասխանեցման գործառույթներն իրականացվում են կառուցվածքային ու առանձնացված ստորաբաժանումների գործունեության միջոցով ([illegible] գործակալություններ): Նախարարության նպատակներից է պահպանել Հայաստանի մշակութային ժառանգությունը: Վերոնշյալ նպատակների իրականացման համար նախարարությունը կատարելագործում է օրենսդրական դաշտը՝ մշակելով նախագծեր, նպատակային ծրագրեր, ռազմավարություններ, հայեցակարգեր եւ կարճաժամկետ զարգացման ծրագրեր, որտեղ մեծ կարևորություն է տրվում ինչպես օտարերկրյա կառավարությունների, այնպես էլ միջազգային կազմակերպությունների՝

ներառյալ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, մշակութային ուղղվածություն ունեցող ստեղծագործական միությունների, ՀԿ-ների հետ համագործակցության:

ՀՀ մշակույթի նախարարության համագործակցությունը Եվրոպա Նոստրա (Europa Nostra) կազմակերպության հետ սկսվել է 2012 թվականից: Այդ համագործակցության շրջանակներում մինչ օրս իրականացվել են երկու ծրագրային նախագծեր, որոնք «7 ամենավտանգված հուշարձանների» ծրագրով ներառվել են կազմակերպության համապատասխան ցուցակում (Short list-ում):

**Միլանի Պոլիտեխնիկը** գիտատեխնիկական համալսարան է, որը վերապատրաստում է ինժեներներ, ճարտարապետներ և արդյունաբերական դիզայներներ: Համալսարանը մշտապես կենտրոնացած է դասավանդման և հետազոտությունների որակի և նորարարությունների վրա, իրականացնում է արդյունավետ համագործակցություն բիզնեսի և արտադրողների հետ՝ փորձարարական հետազոտությունների և տեխնոլոգիական փոխանցման միջոցով: Գիտական հետազոտությունները մշտապես կապված են եղել դիդակտիկայի և հանձնառության հետ, որը թույլ է տվել Միլանի Պոլիտեխնիկին միջազգային մակարդակում հասնելու բարձր արդյունքների՝ գործարար աշխարհը մոտեցնելով համալսարանական գործունեությանը: Ճարտարապետության և քաղաքաշինության հետազոտությունների (*DATSu*) վարչության սահմաններում Մաուրիցիո Բորիանիի ղեկավարությամբ գործում է մի խումբ, որը մասնագիտացված է տարածքային և քաղաքային մասշտաբով ճարտարապետական ժառանգության՝ որպես մեկ միասնական արտեֆակտի պահպանության ու ամրապնդման գործում և ձեռք է բերել զգալի փորձ՝ աշխատելով Իտալիայում և արտերկրում (օրինակ՝ Հայաստան, Մյանմա, Ալբանիա, Վիետնամ և այլն):

<u>**Կոնտակտներ**</u>

**Ծրագրի մանրամասները** հաղթող նախագծի վերաբերյալ՝
[information and jury’s comments,](#)
[high resolution photos and videos](#)

**Եվրոպա Նոստրա**
Ելենա Բիանչի +31 70 302 40 58
Ջոանա Պինհերո +31 70 302 40 55

Թվիթեր- @europanostra

**Արտաքին գործերի նախարարություն**
Ռիտա Գոնելլի +39 06 36916232
rita.gonelli@esteri.it

**ՀՀ մշակույթի նախարարություն**
Սվետլանա Սահակյան
Արտաքին կապերի վարչության պետ
+ 374 11 566065
svetlanasahakyan@mail.ru

**Միլանի Պոլիտեխնիկ**
Հասարակայնության հետ կապերի գրասենյակ
+39 02 2399 2441
relazionimedia@polimi.it